

Անգլիոյ մէջ 1799 թուին մի մարդասէր քահանայ իւր ծխականներին խոհեմութեան և չափաւորութեան վարժեցնելու համար, երկու անհատներ զոգնութեամբ կազմեց մի խնայողական սնտուկ, հրաւիրելով իւր ծխականներին շաբաթը առնուազը երկու պէնս ձգել այդ սնտուկի մէջ, և խոստանալով որ եթէ խնայողները իւրեանց դրամը մինչև հետեւեալ տարին լետ չը պահանջեն, ամեն մէկի խնայածի վերայ իւրեանք աւելացնեն նաև մի երրորդ մաս, որպէսզի գա մի տեսակ քաջալերութիւն դառնայ խնայողներին:

1810-ին մի այլ քահանայ, Սկոթլանդիոյ, ձեռնարկեց խնայողական մի դրամատուն հաստատել, և գործը այնքան ժողովրդականութիւն և ուշադրութիւն գրաւեց որ 7 տարուայ ընթացքում 67 նոյնպիսի ընկերութիւններ հաստատուեցան ամբողջ Անգլիայում: Օրինակները չենք ուզում բազմացնել, այս հաստատութեանց օգուտները այնքան ակներև և հասարակայն բարքերի վերայ ունեցած ազդեցութիւնը այնքան մեծ եղաւ որ կաւալարութիւնքը սկսան իրանց թեւարկութեան տակ առնել այդ սնտուկները, հաստատելով փոստային խնայողական սնտուկներ, որոնք այսօր հարիւրաւոր միլիոններ են պարունակում ժողովրդի խնայողութիւններէն:

Այստեղ էլ խնայողական ոգին արծարծելու մտքով անցեալ տարի մի քանի երիտասարդներ յայտան այդպիսի մի ընկերութիւն հիմնելու գաղափարը, որ անմիջապէս 20—25 հոգի համակրող գտաւ: Ամեն անդամակից իրաւունք ունի տարուայ սկզբում ընկերական առամարի մէջ արձանագրելու որ և է մի գումար, ամսական 1 թուամանից սկսեալ, որ պէտք է վճարէ ամսէ ամիս: Ամսական որոշ վճարք տուողները ընկերութեան հիմնադիր անդամակիցները են որոնցից գուրս կան նաև պարզ խնայող անդամակիցներ, որոնք որոշ ամսական վճարք չունին տալու, այլ կարող են խնայողական սնտուկին պահ տալ որ և է գումար սկսած 1 ղուանից: Անմիջապէս որ խնայուած գումարը 50 ղուան է լինում, բերում է 6 տոկոս, և երբ 100 ղուան է լինում, խնայողը իրաւունք է ունենում, եթէ կամք ունի, ընկերութեան անդամակից համարուելու, շահ կամ վնասից բաժին առնելով:

Խնայողական ընկերութեան ներկայ հիմնադրական տուրքերի գումարն է, ամսական 57 թուաման, և մի տարուայ մէջ մօտ 700 թուամանի չափ գումար

կայ հաւաքուած, որ մի ապահով վաճառատան մէջ տոկոսի է տրուած: Այս գումարը ինքն ըստ ինքեան չնչին է, այնուամենայնիւ վատ չէ մի սկզբնաւորութեան համար, և յոյս ունենք որ հասարակութեան ամեն խաւերի մէջ կը տարածուի այդ ընկերութիւնը: Քիչ չեն թէհրանի հայերի մէջ փոքրիկ ամսական ունեցող գործակատարներ, փոքրիկ գումար շահող գործաւորներ և այլն, որոնց համար մի դիւրութիւն է ընծայում յիշեալ ընկերութիւնը, փոքրիկ գումարներ խնայելու:

Միայն մենք կ'ուզէինք մի խորհուրդ տալ յիշեալ ընկերութեան ղեկավարներին, որը կարող էր թէ ընկերութիւնը աւելի շահաւէտ դարձնել և թէ տարածել հասարակութեան խաւերի մէջ: Որչափ աւելի լաւ կը լինէր որ այդ ընկերութիւնը փոխանակ խնայողական սնտուկի գումարները տոկոսով գնէր, գործածէր մի և նոյն ձևով, ինչ որ գործակցական ընկերութիւնները Եւրոպայում, (sociétés coopératives) օրինակ՝ այդ գումարով կարելի է գնել նիւթեր, իրեղէններ, աւօրեայ կեանքի վերաբերեալ ամեն տեսակ մթերքներ, և այլն, և 10 կամ 12 շահով (որ երկրի սովորական տոկոսն է) ծախել ընկերութեան անդամակիցներին: Այդ նիւթերը մեծ քանակութեամբ առնուելով շատ աժան կը լինէին, և լոկ 10 շահով ծախուելով ընկերութեան անդամակիցներին, առիթ կը տային նորանց աժան գնով առնելու իրանց մթերքը:

Այնքան ընտանիքներ կան որոնք միջոց չունեն իրանց ձմեռուայ մթերքը ամբարելու, և յայտնի է որ այդ մթերքը ձմեռը ծախուում են 30 տոկոս աւելի թանկ քան ամառը: Ինչպիսի մեծ մի օգնութիւն կը լինէր այդպիսի ընտանիքների համար որ ընկերութիւնը ամառուայ մէջ աժանագին մթերք ամբարելով տարեկան 10 տոկոսով այդ մթերքը ծախէր յիշեալ ընտանիքներին: Միւս կողմից աժան մթերք առնելու դիւրութիւնը մի գրգիռ կը դառնայ բոլոր չքաւոր ընտանիքներին, այդ ընկերութեան մասնակցելու, և մի անդամակից, պատկանելով մի չքաւոր դասակարգի, ամսական 1 թուաման խնայելով, որով և իրաւունք ստանալով ընկերութեան մթերքանոցից ապրանք գնելու, ամսական 4 կամ 5 թուաման խնայողութիւն արած կը լինէր իւր առած մթերքների աժանութիւնից:

Գուցէ մեզ առարկեն որ դրամագումարը զեռ բաւական մեծ չէ այդ գործառնութիւնները սկսելու համար, և մենք

այդ լաւ գիտենք բայց գարձեալ իւր միջոցների սահմանի մէջ շատ բան կարող է անել. բաւական է որ սկզբունքը ընդունուի և սկզբնաւորութիւն լինի, յաջողութիւնը և ընկերութեան տարածումը կը կատարեն մնացորդը:

Մի յաջորդ յօդուածի մէջ մենք աւելի մանրամասն տեղեկութիւններ կը տանք գործակցական ընկերութեանց մասին, և յաւսով ենք որ խնայողական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը ուշադրութիւն կը գարձէ մեր առաջարկի վերայ:

Յ. Մ.

1894 թիւը

1894 թիւը նշանակելի քուական եղաւ պարսկահայերիս համար: Ճշմարիտ է, քանի տարիներից ի վեր կրթութիւնն ու յուսաւորութիւնը մուտք են գործել եւ մեր մէջ, բայց հագիւր թէ կարելի է ասել որ մենք գրական եւ կրթական աշխարհում, մի ուշիցե ուշադրութեան արժանի գործ ենք կատարել, այլ, խարխալել ենք շարունակ յոյսի եւ խաւարի, գիտութեան եւ տգիտութեան միջեւ, մի խօսքով, պարսկահայերս առանց մի որեւիցե որոշ ուղղութիւն ունենալու, շարունակ հետեւողներ ենք եղել զանազան անհատական սկզբունքների եւ մեզ ցոյց տրուած սխալ կամ ուղիղ շարիղներին, առանց մի ընտրութիւն անել կարողանալու: 1894 թիւը յեղաշրջում է այդ ամենը: Նա, երբ չենք սխալուում, սկիզբն է լինում մեր, պարսկահայերիս կանոնաւոր յառա-

ջադիմութեան, մեզ տալով
մեր միտքերը եւ դատողա-
քիւնը պարզաբանող մի օ-
րինաւոր միջոց, որը ա-
ռանց այլ եւս ենթարկուե-
լու, մասնաւոր անձանց ազ-
դեցութեան, պիտի աշխատե-
մեր մէջ մի ընդհանուր կար-
ծիք եւ սկզբունք հաստա-
տելու եւ տարածելու, որոն-
ցից դժբաղդաբար միւնչեւ
այսօր գուրկ ենք մնացել:
Այդ միտքարական է:

Ասացիւք մի միջոց, որը
պիտի աշխատեւ սրափեցնել
մեզ մեր դարաւոր քմրու-
քիւնից եւ անտարբերու-
քիւնից եւ անխելի մի կապ
հաստատել, մեր հասարա-
կական գործիչների մէջ, ե-
րբ յիշուի ձգտումն ենք սո-
ղոյի սոյդ նպատակ: **Այդ**
պարբերական քերքի մի ե-
րեւոյթն էր մեր մէջ, որը
ոչ թէ մտաշին կամ քմաշին
հաճոյքի մի ծնունդ է, այլ,
զգուտժ այլ եւս եսական եւ
ինքնական դրոշմներից
եւ դրոշմած մի ընդհանուր
ազգային շահը պաշտպանե-
լու ոգուց, ձեռնարկուած է
այդ դժուար տանելի գործը,
որի միջոցով կարող ենք հի-
մա, մեզ համար դեռ անշու-
ծելի եւ մութը մնացած խն-
դիրները լուծել եւ պար-
զաբանել. բաւական է ուրե-
մբն, ինչքան ապրեցիւք
մենք անստուգութեան մէջ
այսուհետ պետք է աշխա-
տենք ճանաչել մեզ մեր իս-

կութեամբը, պետք է ջա-
նանք դիպել մեր ընդհանուր
եւ մասնաւոր շահերը
ուղղակի մեր տեսողու-
թեամբը: **Երբ** մենք յետ ենք
մնացել մեր արտասահմա-
նի ազգակիցների բարո-
յական եւ մտաւոր զարգա-
ցումից, այդ ոչ ինչից չէ երբ
ոչ մեր մէջ ինքնաճանաչու-
թիւն չունենալուց:

Երբ մենք ուզում ենք
մարդկութեան մէջ մի նը-
շանակութիւն ունենալ, մի
որոշ տեղ բռնել, պետք է ա-
նենք այն ինչ որ ուրիշներն
են անում, պետք է կրքենք
մեր գաւակները եւ մեզ, ինչ-
պէս կրքում եւ կրքում են
ուրիշները: **Ինչու** պետք է
մենք պարսկահայերս բա-
ցառութիւն կազմենք մեզ
չըջապատող ազգութիւննե-
րից, չէ՞ որ ընդհանուր
մարդկութեան կենսական
եւ բարոյական պիտոյք-
ները միեւնոյնն են միայն
ապրելու եւ իրանց մտքերը
բացատրելու եղանակը
տարբեր: **Եւ** երբ մենք յե-
զուններ ենք սովորում մեզ
անհասկանալի եւ անձա-
նօր մնացած գաղափարներ
եւ մտքեր հասկանալու, ըմ-
բռնելու համար, մենք աշ-
խատում ենք նմանութիւն-
ցա հագուստով, ձեւով, այդ
ցոյց է տալիս որ մենք մեր
վիճակը քերի ենք գտել եւ
դժգոհ ենք եղել նորանից եւ
շփուելով ուրիշների հետ

ուզել ենք մեր վիճակը բա-
րոքել եւ երբ մեր արտա-
քիւնը նմանեցնում ենք նո-
րանց, ինչո՞ւ եւ չաշխատենք
մեր ներքինը — մտաւորը
նմանեցնել նորանց, չէ՞ որ
արտաքիւնը ու ներքինը մի-
միանց պետք է համապա-
տասխանեն:

Բայց չէ, մենք մի սովորութիւն ու-
նենք որ շատերին էլ դիւր է գալիս եւ
հաւանելի է, եթէ մեր մէջ մէկը գըլ-
խարկը փոխում է կարծում է թէ խել-
քըն է փոխել, եթէ մէկը սերթուկ է
հագնում, կարծում է թէ զարգացել է
զաղափարական մարդ է դարձել, պնդ-
տաւոր է խօսել եւ խօսում է, թէ ինչ է
խօսում, ինչ է ուղղում ասել, այդ, ին-
քըն էլ չը դիտէ, ոչ ոք էլ չէ հասկա-
նում, միայն լսում եւ առանց դատելու
հաւանում են նորան եւ խօսողն էլ գոհ
է մնում: **Շէնք** ալդտեղից էլ ծագում է
մեր մէջ իմաստակութեան ոգին, որին
միամիտը կուրօրէն հետեւելով անդարդ
մանելի վնասների է երթարկում, եւ
շատ ու քիչ թուղթ մրոտողը աշխա-
տում է այդ ոգին իւր մէջ աւելի զար-
գացնել ի վնաս իւր նմանների, եթէ ոչինչ
էլ չը լինի, գէթ անուն հօ կ'հանէ այդ
էլ բաւական է մարդ է դարձել, գի-
շերը կարող է հանգիստ քնանալ: **Չէ** էլ
այսուհետ չը պետք է խաբուինք եւ եթէ
չենք էլ ուղղում մենք մեզի խաբած լի-
նել, պետք է լուրջ կերպով քննենք մեր
առօրեայ ամեն խնդիրները, եւ եթէ չենք
ուղղում միմիանց վնասել, ինչ որ էլ լի-
նի, մինչեւ մեր աչքով լաւ տեսած ու
մեր խելքով լաւ կշռած չը լինենք, էլ
չը պետք է համոզուենք եւ չը պետք է
հաւատանք ուրիշներին:

Ահա թէ ինչու նշանակելի թուական
է 1894 թիւը մեզ համար:

Մեքայէլ Յ. Եղիազարեան

**ԻՂԵՍԱԿԱՆ ՀՈԳՈՒ ԲԱՑԱՆ
ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԷՋ**

II.

Պատմական հանգամանքները, կարիքը, պանդի-
տութիւնը եւ տգիտութիւնը գաղցր են մեր մէջ
դրպանելու սերը: Նայն չարչիւստ հոգին, ինչ որ
տեսանք մեր տալիսի մէջ, դեռ գործելու ունի եւ
այժմ: Եւ նկատուած է մեր ամեն մի դործի, ա-
մեն մի ձեռնարկութեան եւ ամեն մի փորձերի
մէջ: Այդ հոգին ենք միայն ամեն ժամանակ մեր
պապերից, հասցնում ենք այժմ նորան զարգացման
զազանակէտին եւ տալիս ենք ի ժամանակութիւն
մեր որդոյ: Նայեցէք, ինչպէս մեր հայ երիտասարդը

ներք ուսում են լսեցում միջնակարգ եւ բարձրագոյն ուսումնարաններում: Ընդհանրապէս նորա սովորչում են լաւ, բայց միայն այնքան լաւ, որ կարողանան աւարտել իրանց ուսման ընթացքը, սակայն դիպում, իսկ յետոյ վատտակել որում եւ միջոցով իրանց բարձրութիւնը: Մեր ուսանողների մեծագոյն մասը, աւարտելով իւր ուսման ընթացքը միջնակարգ ուսումնարաններում մտնում է համալսարաններ, բժշկական մասը, քանզի նորա բժշկութեամբ վերայ նայում են այնպէս, ինչպէս մի արհեստի վերայ, որով կարող են շատ շուտ հարստանալ: Այս նպատակով եւ նոցա բարոյական մակերեսով յարմար զամ է: Ուսանողը մէջը որ աւարտում է համալսարանը եւ մտնում է կանանի մէջ, որոնք առաջին ցործը վերջ է ամուսնանայ մի հարուստ աղջկայ հետ, բնաւ ուշադրութիւն չը դարձնելով նորա բարոյական կողմերի վերայ: Այս տեսակ «չարքիական» հոգու աղիքացումն են իրար մեր աղջիկները եւ տղերքը մի առանձն տարօրինակ նշանակութիւն են ստացել մեր բարձրագոյն միջնակարգ ուսման «մոտորի» ցուցակում, իսկ աղջիկներն «միջնակարգ» ճիւղի մտնելուն նման ուսուցանում են, — աղջկայ ծնունդուն տրամում, տխրում են: Երբոր մենք ունենում ենք աղջիկ, մեր մէջ զարմանում են այն տեսակ զգացումները, որոնց եւ մարդասիրական անուանել չեմ կարող: մենք աղջկայ վերայ նայում ենք այնպէս, ինչպէս տուն մի անկողնոյ առարկայի վերայ, որ մեզ շարժանակ չենք ծախների մէջ է ծախում, առջնայ մի վարձագրութեան յայտ նորա կողմից եւ այն իսկ պատճառով մենք աշխատում ենք նորան որքան կարելի է շուտ մտնել տալ ինկողնոյ ծախքերից ազատեալով: Եւսման նորա արարականութեան գործընթացն մասին մենք բոլորէն չենք մտածում: Եւսման միտ է մեր տեսնում ենք անուանում նորան ուսման նպատակ, այն անունով մեր միայն «մեծագոյն» հմտութեան: Այս ծեծ հմտութեան եւ արարական այս պատճառով մեր աղջիկներն մեծագոյն մասը չի աւարտում իւր ուսման ընթացքը, ծնողները շատ շուտ հանում են նոցա աղջկաները նորանից եւ մտածում են այն նուազանիս նոցա վերջակի կարգադրութեան մասին: Այդ տրուանից բնորոշ է «մարդու եւ նորա բարձրագոյն անմեղից աղեկորը»: Արտնում ենք լաւ փեսայի մտքով համար: Աղջիկը մէջը փող ունի, մէջը լաւ սովոր: Անշուշտ այս բանի մասին յայտարարութեամբ ենք յորդոյ հասարակութեան եւ փեսայացուները տանկերի պէս քուսնում են մեր աղջիկ: Յայտնում են ոչ մէ միայն հասարակ, բայց հարուստ չարի փաճնականներ, այլ լաւ դաստիարակուած հմտաւարականներ չարիքներ, որոնք մեր հասարակութեան սեռն են կազմում: Երկրաչափներ, զինվորականներ, բժշկականներ, ծարտարապետներ, փոստարաններ իրար հետեւից փազում եւ ուզում են նոյն աղջկայ հարստութիւնը եւ առաջ ծնողքը: Նորա ցանկանում են՝ ծնենալ ամուսնութեանը ընդ միջոյն ապահովացնել իրանց կեանքը: Նոցա բարձր կրթութիւնը, նոցա «պիտոմք», նոցա նշանազաններ ու նշաններ ոչ այլ ինչ են, եւս ոչ մի արտաքին ծածկը — զիմակ, որպէսզի աւելի թանկ կարողանան ծախել իրանց կեղծ արարքը: Անուստիկ, այսպէս է նայում կանանի վերայ կրթութեան հայր եւ պնդիւթ բախկար: Նոցա մէ իրանց զաւակներն ու, մէ քննարկութեամբ եւ մէ հոգու յստկութեամբ միմիայնից չեն տարբերում — շահասիրութիւնը մատնեց նոցա:

Ներկայացնելով հարեանցորէն մեր առաջուայ եւ այժման հոգին, ակամայ գրիս եմ հետեւեալ տխուր եզրակացութեան:

Եւսման սխալները, փորձը, գիտութիւնը, կրթութիւնը եւ ժամանակը չեն կարողանում բառի բուն նշանակութեամբ կրթել մեր հոգին եւ այդպիսով բարձրացնել մեր հասարակութեան բարոյական մակերեսը: մեր ապագան շատ անմիայնակ դ յետով պէտք է ներկայանայ մեզ:

Բ. Առ—եան

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան 5 յունվարի 1894
Տեղական ազգային հաստատութիւններից ամենից աչքի բնկնողը և հայ հա-

տարակութեան ուշադրութիւնը գրաւողը Հայկազեան երկսեռ ուսումնարանն է. Ա ինչ է սրան արժանանում այսպիսի տարապայման զրաւիչ լինելու: Այդ սրբալուծիմ էթէ ասեմ որ սրա պատճառը պիտի գտնենք նորա յարուցած տարաբախտ անհամաձայնութեան և կուսակցութեան մէջ: Ես համոզուած եմ որ ուսումնարանը միակ հաստատութիւնը պիտի լինի որ տեղիք չը տալ կուսակցութիւնների: Ես չեմ կարող հաւատարմ չեմ կարող մինչև անգամ կասկածել, որ ուսումնարանի ուսումնական փիճակի զրգուած երկու կուսակցութիւնները և հասարակութեան այն մասը որ անտարբեր է ուսումնարանի վերաբերմամբ, այնքան անխիղճ են որ ուղեւան իրանց կիրքերը և անգործողեութեան ցամաքութիւնը յազեցնեն չը գործելով պէս ինչ որ կարող են ապագայ սերունդի համար և մինչև անգամ փորձելով փնտել իշխաբարձրութեանը: Այսպիսի մի անխիղճութեան անհաւանականութիւնը մի նմաբողջ հասարակութեան կողմից ինչպատճառ տուաւ կարծելու որ ուսումնարանի վերաբերեալ կուսակցութեան երկու ճիւղերն ևս ունին մի փոքր իրաւունք իրանց արդարացիութեւ համար: Ինչպիսի պարզապէս հակաանալոց համար անհրաժեշտ էր երկու հակառակ կուսակցութեան առարկութիւնները եւ լսէի և քննէի տեսնելու համար թէ որչափ իրաւացի են և թէ բաւարարութիւն ընտանալու թիւոց կայ թէ ոչ ընթերցողը կը սխալուի եթէ մտածէ որ ես ցանկանում եմ դատաւոր հանդիսանալ այս խնդրում. իմ ջերմ բաղձանքն է տեղափոխ հայ հասարակութեան մէջ միութիւն տեսնել և որ հային այսպիսի մի բաղձանք պակաս կը լինի: Այս յօդուածի մէջ ես կը ջանամ մի ընդհանուր տեղեկութիւն տալ ընթերցողին երկու կուսակցութեան ասեղքների վերաբերմամբ, իմ կարծիքները տալ և լետոյ թող տալ հասարակութեանը քալելու առնել վերացնելու այս դժբախտ անհամաձայնութիւնը:

(Կը շարունակուի)

ԴԻՖԴԵՐԵՆՏ

Դիֆֆերենտը ամենավտանգաւոր տարափոխիկ հիւանդութիւններից մէկը լինելով դիւրութեամբ բռն է դնում այնպիսի վայրերում, որոնց մերձակայքում առողջապահութեան պայմաններին լաւ ուշադրութիւն չեն դարձնում:

Եթէ մի երեխայ մէկ տան մէջ վարակուած է, պէտք է նորան առանձնացնել, մանաւանդ երբ ուրիշ երեխաներ էլ կան բնտանիքի մէջ:

Հիւանդի համար գործածուած կամ նորա սենեակում գտնուած բաժակները, դգայները, թաշկինակները, պէտք է զգուշութեամբ մաքրել եւ անտահանել:

Չը պէտք է թալ տալ որ շատ մարդիկ մտնեն հիւանդի մօտ: Ինչպէ վերայ դեղ դնելու համար գործածուած

բաժակ կամ ուրիշ բաները չը պէտք է զուրս ձգել, այլ այրել:

Դիֆֆերենտի ժամանակ ամենաթեթեւ բզացան էլ չը պէտք է անուշադիր թողնել, եթէ խնամք չը տանեն կարող է ամենավտանգաւոր դիֆֆերենտ լինել:

Մ. Հ. Սմիթ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ զանազան կողմերից դիտողութիւն են անում. „Շախիղ“ իրրեւ քերք շատ փոքր ծաւալ ունի, մենք կատարելապէս հասկանում ենք այդ նկատողութեան իրաւացի լինելը, բայց նիւթի օգտակարութիւնը չէ որ մեզ առիւցում է՝ այդպիսի փոքր քերք հրատարակել, այլ նիւթական. եւ անմիջապէս երբ որ բաւական բաժանորդներ անենանք մենք խոստանում ենք աւելի մեծացնել մեր քերքի ծաւալը:

Վ իննսուի միջխաբեաններից մէկը Գ. Ղարամբարեանը որպէս հարդուած է „Revue d'Orient“ հրատարակեց հայ լոց պարբերական մամուլի պատմութեան առաջին հատորը: Այս աշխատութեան հետ միասին դուրս է փոփոխորակական պատկերը „Ազգաբար“ առաջին լրագրի առաջին համարի, որ 28 հոկ. 1794 թ. Մազրասում հրատարակեց շիւազի արքեպիսկոպոս Զմրութիւն Ծմաւոնեանը: Ղարամբարեանը ձեռնարկել է այդ հրատարակութիւնը դացող տարուայ հոկտեմբ. ամսում տեղի ունեցող հայկական մամուլի հարեւրամեակի առթիւ:

Առկիւսի Հայոց Բարեգործական ընկ. քարաւղար, պ. Հ. Առաքելեանը ուղարկուել է Էջմիածին իւրեւ միջնորդ Վեհ. Կաթողիկոսի մօտ, գանձելու ի հաշիւ վերոյիշեալ ընկերութեան 1881 թ. Ուուլցական ժողովում հաւաքուած գումարը: Վեհ. Կաթողիկոսը յարգել է ընկերութեան խնդիրը և հրամայել է վճարել այդ գումարը, որը պէտք է գործածուի արքունական դպրոցներից ոչ սուլցական իրաւունքներ ձեռք բերելու: Գումարն է 2500 լուբլի:

(ՈՅՐ. Օճ:)

Արտոնատեր-Հրատարակիչ՝ Անդրեաս Բեկիազարեանց: